


Գ. ԱԴԱՍԵԶՈՎ

# ՆԺԴԵՀԻ ՀՐԱՄԱԿՈՒՄԲԻ ՎԼՈՂՆՉԱՑՈՒՄԸ

ԵՎՐՈՊԱՅԻ Ե ՀԱՅԱՍՏԱՆ  
ՀՐԱՄԱԿ ՔԻՎԻՑԻՑԱՅԻ  
Տ Ա Խ Ա Մ Ց Ա Կ Ա Ր Ե Ւ Յ Ե

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԾԵՐԵՎԱՆ - 1931



5 OCT 2011

9(47.925)

0-20-

Գ. ՈՒԱՆԵԶՈՎ

ՆԺԴԵՀԻ ՀՐՈՍԱԿԱԽՄԲԻ  
ՎՈՉՆՉԱՑՈՒՄԸ

ՆԴՐՇՎՈՒՄ Ե ՀՈ.ՅԵ.Ա.ԿՈ.Ն.  
ՀՐԱ.ԶԻ.Գ. ԳԻՎ.ԻԶ.Բ.Օ.Յ.Բ  
Զ.Ա.Ս.Ն.Ա.Մ.Յ.Ա.Կ.Ի.Ն

\*\*\*\*\*

9(47.925)

0-20

ՊԵՏՈՎԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 1981



102 09. 2013

12018

## ԴԱՇՆԱԿՆԵՐԻ ՅԵՐԵՎԱՆՅԱՆ ԱՊՈՏԱՄԲՈՒԹՅԱՆ ԼՈՒՐԵՐԸ

1921 թվականի փետրվարի յերկրորդ կեսին  
Խորհրդակին Հայաստանը ծանր որեք եր ապրում:

Վրացյանի ապստամբած հրոսակախումբը Հայաստանի Հեղկոմը կարմիր փոքրաքանակ զորքերի և սակավաթիվ հրետանու ու լերկու զրահազնացքի հետ Դամարլիկի և Թյուրքիայի մեջտեղը նեղն եր սեղմել, վորտեղից առանց զբսի ոգնության զժվար եր ազատվեր Զնալած կարմիր զորամասերի կրած բոլոր գժվարություններին, նրանք ամուր կանգնած եյին Վրացյանի թվաշատ վոհմակի ղեմ:

Յերեանի տակ կարմիր զորամասերի ունեցած առաջին անհաջողությունների մասին Թիֆլիսում մեր ստացած լուրերը սուր դանակի պես խրվում ելին այն ընկերների սիրտը, վորոնք կարմիր բանակի շարքերում մասնակցել եյին դաշնակ իշխանության տապալմանը և Հայաստանի խորհրդայնացմանը: Այդ երազես աննշան գործի լուրը ցնցող տպալորություն գործեց, թեպետ ամենքս ել հավատաժած եյինք, վոր դաշնակները մինչեւ փետրվարի վերջն ել չեն դիմանա:

Այդ տիսուր լուրերն առնելոց հետո զժվար եր Թիֆլիսում նստելը, մինչդեռ մեր ընկերներն արյուն ելին թափում:

33533-65g

Հրատ. № 1493

Գրատեպ. № 6144 (բ) Պատ. 75 Տիրաժ 5000  
Պետհրատի յերկրորդ տպարան Յերևանում

Մենք խնդրում ենք մեզ շուտափույթ Թիֆլիսից  
Հայաստան գցել՝ մեր ընկերներին ողնելու, խոռվա-  
րաբներին Հայաստանից արտաքսելու: Բայց դժբախ-  
տաբար այդ անհնարին եր, վորովհետև մեր գունդը  
նոր եր կազմվում զանազան զորամասերից, վորոնք  
մենջիկների դեմ վարած բաժան-բաժան կոփլիերից  
հետո՝ մինչև 20—30 % կորցնելով իրենց մարտունա-  
կությունը, պետք է թարմանային ու իրենց կազմը  
համալրելին:

Հայաստանի սրտից՝ Յերևանից դաշնակների ար-  
տաքսիլուց հետո վերջապես, մայիսի յերկրորդ կե-  
սում, մեր գնդի յերկու գումարտակը լրիվ գումակով  
և հեծյալ հետախուզներով փոխադրվեց Եջմիածին՝  
3-րդ գումարտակը կազմելու:

#### 4-րդ ԳՆԴԻ ՌԱԶՄԵՐԹԸ ԶԱՆԳԵԶՈՒԻՐ

Մեր գնդի Եջմիածին գալուց հետո, հունիսի  
յերկրորդ կեսին, 3-րդ գումարտակը նույնպես համա-  
լրվեց: Մինչ այդ դաշնակները սակավին նստած եին  
Զանդիպուրում և գործում եին մեր զորամասերի դեմ:  
Վերջապես, յերկար սպասումներից հետո, մեր  
գունդը հրաման ստացավ Յերևանի խմբի (ընկ. Վելի-  
կանովի գիվիզիա) զորամասերին ոգնության յելներու:  
Դնդի յելուսափ լուրը մեծ ցնծությամբ ընդունվեց:

Նույն որը հրամկազմն սկսեց պատշաճութել ուղ-  
ձերթի, վազելով կոռպերտուլից կոռպերախվ, ճանա-  
պարհի համար անհրաժեշտ իրեր գնելով՝ աշխատելով  
ամենաանհրաժեշտ առարկաների պաշար անել Հայո-  
կապես աշխատում ելին վորքան կարելի լե շատ խի-  
սին ձառք բերել, քանի վոր գիտելին Զանդեզուրի  
կլիմայական պարմանները:

Գնդին արձակած հունիսի 24-ի հրամանով գնդի  
բոլոր ստորաբաժանումներին առաջարկվում եր հե-  
տեւալ որը ժամը 18-ին մարտապես լիովին պատրաստ  
լինել: Հրամանի վորոշած ժամին ամբողջ գունդը շար-  
ված եր նախկին Ճեմարանի բակում, ուր յեկան կու-  
ռակցական, խորհրդավին, արհեստակցական կազմա-  
կերպությունների ներկայացուցիչները և Եջմիածնի  
ամբողջ բնակչությունը՝ մեզ ուղարկած ճանա-  
պարհ գնելու:

Թուոցիկ միտինգ կազմվեց: Դանդաղորեն, չշտա-  
պելով ձեռաց սարքած ամբիոն բարձրացավ Հայաս-  
տանի ուղղական կոմիսար ընկ. Մյասնիկյանը: Կար-  
միր բանակավինները նրան ամբիոնի վրա տեսնելով՝  
խմբովին գոչեցին:

— Ուռա, ուռա, ուռա...

Ամբիոնի միջից աղաղակում ելին.

— Կեցցե Կարմիր բանակը և նրա ղեկավար Կոմ-  
մունիստական կուսակցությունը:

Նվազախումբն անընդհատ Խստերնացիոնալ եր  
նվազում: Յերբ լուություն տիրեց, ընկ. Մյասնիկյանը  
ձեռքերով թեթեակի բազրիքին կոթնած՝ ամբիոնի  
վրայից սկսեց.

«Ըսկեր հրամանատարներ, քաղաշխառավոր-  
ներ, կարմիր-բանակավիններ: Զանդեզուրի գյու-  
ղացու թշնամի դաշնակը և նրա գվարդիա մառ-  
զերիստները ահա վեց ամսից ավել ե, ինչ նըս-  
տել են գլուղացու վզին և նարավորություն  
չեն տալիս իր գլուղատնտեսության մակարդակը  
բարձրացնելու: Դաշնակներն իրենց պահելով  
Զանդեզուրը՝ հույս ունեն նորից Յերևան ընկ-

նելու ժամանակը հասել և վերջնականապես կոտրելու դաշնակների վիղը և առմիշտ ազատելու զանգեղուցիներին:

Հնկերներ, Հայաստանի աշխատավորները հուսով և ակնկալութիւնը ձեզ են նայում. ձեր լուրաքանչյուր շարժումին ամբողջ յերկիրն և հետևում: Ձեղ ուղարկելով պրոլետարիատի թշնամու ռազմաճակատը, մեղանից, ալսուեղ մնացողներիցս յուրաքանչյուրը հուսով և ակնկալությամբ կհետեկի ձեր լուրաքանչյուր շարժմանը: Գնացեք, կատարեք ձեր գործը, իսկ թիկունքը ձեզ նեցուկ կլինի, կողնի, կկերակրի ձեղ:

Հրամանատարներ, հիշեցեք, վոր ձեր արիությունը և շնորհքը որինակ կլինեն զորքերի համար: Ամուր յեղեք:

Քաղացխատավորներ, ձեր ղեկավարությունը, ձեր հոգատարութիւնը զորամասերի մասին կսեղմի շարքերը, կամրապնդի զորքերը և նրանց կհամակի պրոլետարական հեղափոխության վկողի:

Կարմիր-բանակայիններ, միաբան ու համարձակ առաջ դաշնակ արկածախնդիրների դեմ, հանուն Զանգեղուրի զյուղացու ազատության: Խնամու և ուշադիր վերաբերվեք Զանգեղուրի բնակիչներին, զանազանեցեք նրանց և նրանց մեջ թագնված բանդիաներին, վերջիններին չխընալիւ թշնամիներին, սրբիաներին չմեղքանալ և յերկրի խաղաղ բնակչությանը չղիպչել:

Մեր թշնամին զանգեղուցին չե, այլ նրա վզին նստած մախնովեց-կուլակը:

Հնկեր կարմիր-բանակայիններ, սվինով սրբեք

ու գնդակով պոկեք Զանգեղուրի լուսագագաթներին կպած կողոպտիչ պարագիտներին: Հայաստանը և նրա լեռները կովկասի աշխատավորները հարյուրապատիկ կհատուցեն ձեզ ձեր աշխատանքի համար. դրանով դուք կբախտավորացնեք մեր յերկիրը:

Միաբան ու համարձակ առաջ:

Կորչեն ժողովրդի թշնամիները:

Մարշ գեպի Զանգեղուր:

«Ուռացի» աղաղակները խլացրին ընկ. Մյասնիկյանի վերջին խոսքերը:

Ամբիոն բարձրացավ բարձրահասակ մի մարդ՝ զինվորական լիովին հանդերձանքով: Դա գնդի հրամանատար ընկ. Տրավկինն եր: Նա թեթև կակազով սկսեց.

«Հնկեր բանվորներ, զյուղացիներ և Եջմիածնի աշխատավորներ. թուլ տվեք 4-րդ գնդի ամբողջ կազմի անունից, այն գնդի, վորը մենշեկների հետ ունեցած մարտերում մշտական հաղթող և լեղել վստահացնել ձեզ, վոր դաշնակներին ել կհասնի...»

(Նրա խոսքերն ընդհատվում են բարձրագոչ «ուռացի» երով և «կեցցե աշխատավորների բանակը» աղաղակներով. յերաժշտախումբն ինտերնացիոնալ և նվազում):

«Մենք բանվորա-զյուղացիական կառավարության կամքով ռազմաճակատ յելնելով՝ ձեզ խոսք ենք տալիս, ինչ գնով ել վոր լինի, զանգեղուցիներին ազատել պարագիտներից ու կողոպտիչներից: Մենք չենք վերադառնա ձեզ մոտ, մինչեւ

չմաքրենք Զանգեզուրը և նրա լեռներից չպհակենք նրանց կպած դաշնակներին իրենց մառւողերիստներով։ Մեր գնդակը չի վրիպի, մեր սվինը չի ընկճվի. ձեր ցանկությունը կկատարվի»։

Նորից լսվեցին բարձր ու անլուելի ռուռածները։

Միտինգը վերջացավ և գնդի հրամանատարի հրամանով մեր գունդը ծեմարանի բակի փոքրիկ դարպասով ռուռածների տակ և նվազով յելավ խճուղին և դիմեց դեպի Եջմիածին կայարանը։

Մինչև կայարան հիանալի ճանապարհ եր։ Յեղանակը մեր յերթի համար նպաստավոր եր, և կարմիրբանակացիններն ուրախ առաջ քալելով՝ հեղափոխական լերգեր ելին յերգում Եջմիածնեցիք մեզ ճանապարհ դրին մինչև գյուղի ծայրը և իրենց հարազատներին ու ծանոթներին հրաժեշտ տվին։ Կայարան հասնելով՝ իջանք ապրանքալին կառամատուցի ռայոնում՝ սպասելով բեռնման։ Վերջապես գիշերվաժամը 1-ին 1-ին և 2-րդ գումարտակներ հրաման ստացան բեռնվելով՝ իբրև գնդի առաջին եշերն։ Բեռնվելուց հետո անհամբեր սպասում ելինք ճանապարհ ընկնելուն։ Վերջապես հնչեց շոգեկառքի յերկարածիկ սուլոցը, վոր սլաքավարին իր մեկնումն եր ազգարարում։ Ու ծանր փնչալով տարավ իր յիտելից վագոնները։ Յես արագությամբ բարձրացա կեղտոտ ու անճոռնի վագոնը և պառկեցի հրամանատարների կողքին, վորոնք աշխուժ զրուցում ելին հակառակորդների հետ ունենալիք ընդհարումների մասին։ Կարմիր-բանակալիններն իրենց հերթին խմբելով վագոնի մի անկյունում, իմրովին հեղափոխական լերգեր ելին լերգում, իսկ մյուս վագոններում մոմերի աղոտ լուսով ազգալին պարեր ելին պարում։

Յանապարհը շատ ձանձրալի յեր. գիշերային խորվարը թուլ չեր տալիս դիտել մեր անցած վայրերը. գնացքն ել շատ դանդաղ եր շարժվում Սողում եր գնացքը, իսկ ուկաները հին վագոնների ծանրության տակ ճոճում ելին։ Յերեան-Զուլֆա ճանապարհը դաշնակների որով բարձիթողի արված ու քայլալիքած եր։ Այն ժամանակվա դաշնակցական հայաստանում ավելի խղճուկ ճանապարհ դժվար ե յերեակալել։ Ռելսերը շատ վատ ելին դարսված, այնպես վոր ամեն մի չընչին դարձին վագոնները մեկ այս, մեկ այն կողմն ելին ծովում, իսկ ընթացքն արագացնելիս այնպես ելին տարուրերվում, վոր նստելը դժվար եր։

Մենք անցնում ելինք մի շարք փոքր ու կեղտոտ կայարաններ, վորոնք քաղաքացիական կրիժների ժամանակ անցել ելին մեզնից դաշնակներին ու յետ և ավերված ելին։ Կայարաններում հերթապահից ու սլաքավարից զատ վոչվոք չեր յերեւմ։ Իսկ հերթապահ հեռագրինը ապալարատի յետեւ նստած՝ ծանր ու բարակ «Մորդիկի» այբուբենն եր տկտկացնում։

Լուսաբացին անցնում ելինք Շահթախտ կալարանով. այստեղից հիանալի տեսարան ե բացվում շըրշակալիքի վրա։ Արաքսն այստեղ բազմաթիվ վոլորտներ ունի, վորոնցից մեկի վրայով գցված ե քարե հաստարաններով փայտաշեն մի կամուրջ փայտե բազրիքով։ Այդ կամուրջով ե կատարվում հաղորդակցությունը Մակվի խանության հետ։

Գիշերը հիանալի յեղանակ եր, բայց առավոտվակեմ ամպի գոռոց լսվեց, և մենք տեսանք Նախիջևանի կողմից շարժվող մե ամպը։ Մենք և ամպը իրար ելինք մոտենում։ Ամպի փոնի վրա սպիտակին ելին տալիս

Նախիջևանի հայկական յեկեղեցին ու թյուրքական մզկիթն իր բարձր մինարեթով:

Անձրէ եր շնչում և խոտահում եր գալիս:

Յեվ ահա ցանված արտի վրայով անցավ առաջն ալիքը. քամի փրթավ և ողի մեջ պտույտ առավ հնձած խոտը. Մեքենավարը սուլեց և արագացրեց գնացքի լնթացքը:

Յերբ գնացքը մոտենում եր Նախիջևան կայառանին, քամին դադարել եր, իսկ անձրէի խոշոր կաթիլները մաղվում եյին խոտի ու վագոնի թիթեղակարի վրա: Չնայած անձրէին՝ կայարանում մեզ սպասում ելին Նախիջևանի կուսակցական, խորհրդավային ու արհեստակցական կազմակերպությունների ներկայացուցիչները: Գնացքը զանդաղ մոտեցավ կայարանին և կանգ առավ: Կարմիր-բանակալիններն սկսեցին վագոնները բեռնաթափելու պատրաստվել Վերջապես անձրէլ դադարեց, մենք ել պարպեցինք գնացքը:

Նախիջևանի ներկայացուցիչների կարճառոտ դիմավորումից հետո արդեն վագոնից լելած 1. ին և 2. րդ գումարտակները տեղավորվեցին կայարանին մոտ՝ սպասելով 2. րդ եշելոնին:

Ավելի շարժուն կարմիր-բանակալինները, չնայելով խոնավ յեղանակին, կը ակ արին ու սկսեցին թեյ պատրաստել. լերթի խոհանոցներն ել իրենց հերթին ծուխ արին ու սկսեցին ճաշ պատրաստել:

Յերկժամկան սպասումից հետո վերջապես սեմափորից այն կողմը լերեաց սկ ոձանման գնացքը, վոր գնչալով գեվարությամբ իր յետելից քաշում եր 50 վագոն. հասավ ու կանգ առավ: Լսվեց «բեռնաթափվել» հրամանը:

Մարդիկ լելան ու սկսեցին դատարկել զանազան սալեր ու իրեր: 2.-րդ գումարտակի բեռնաթափումից հետո ամբողջ գունդը շարվեց և գումարտակներով կարգով շարժվեց Նախիջևանի խճուղով գետի Շահրուզ: Նախիջևանի նեղ ու ցեխոտ փողոցներով անցնելիս արդ քաղաքի բնակիչները ժպտաղեմ ուղեկցում եյին մեզ և անկեղծ-հոգեբուղիս խոսքեր ասում, հաջողություն ցանկանալով դաշնակների հետ ունենալիք կովում: Անձանաչելի լեն այդ թյուրքերը: Նրանք արդեն մոռացել են լերբեմնի թշնամանքը հայերի ու թյուրքերի միջև:

Նրանք մոռացել են հայ-թյուրքական կոտորածը և այժմ վաղելով մեր լետեկից՝ ժպտալով գոչում են.

Սալամ, սալամ:

Թյուրք բնակչության այդպիսի ընդունելությունից ուրախացած՝ առաջ ելինք շարժվում: Վերջապես լերեաց ամբողջապես կանաչի մեջ կորած Շահրուզ գյուղը:

Շահրուզ գալով՝ գունդը տեղավորվեց բացովագում, առաջ ուղարկելով մարտական պահպանությունը, իսկ գնդի մկուս մասերն սկսեցին վրաններ խփել ու աշխատանք սկսվեց՝ վորպես մրջնոցում. մեկը վրան եր պատրաստում, մկուսը կրակ եր անում՝ իրեն համար թեյ լեփելու համար, ուրիշներն ել բոլոր հոգերից աղատվելով՝ գետափ գնացին թարմանալու: Բոլոր կարմիր-բանակալինները և հրամանատարական կազմի մասը վրաններում տեղափորվեցին, իսկ հրամանատարների մեջ մասը տեղ գտավ բնակիչների բնակարաններում: Մեզ հատկացվեցին ամենալավ բնակարանները. թյուրք տնատերերը մեզ ընդունում եյին

ամենամեծ սիրալիությամբ, խնդրելով չքաշվել, զգալ մեզ ինչպես մեր տանը, մեզ ամեն հարմարութլուն ընձեռում ելին, ինչ ունելին և ինչ մեզ պետք եր, մասնավանդ ընտանիքավոր հրամկագիրն,

Պետք ե նշել վոր մենք այս աստիճանի տարակուս չունելինք գաղնակներին հաղթահարելու վերաբերմամբ, վոր հրամկագիր մեծամասնությունը հետներն առել ելին իրենց կանանց, վորոնք հետագայում մեզ շատ ոգտակար լեղան մեր վիրավորներին խնամելով:

Բացովթյագը մինչև յերեկոյան ժամը 10-ը հանդարտվեց, ամենքը պատկեցին քննելու. բացառություն եր գնդի հրամանատար ընկ. Տրավկինը, վորը շրջապատված իր ոգնականով, համհարզով և յերեք գումարտակների հրամանատարներով, ոպերատիվ քարտեզի մոտ նստած՝ մշակում եր հակառակորդի հետ հանդիպելու դեպքում ունենալիք գործողությունների ծրագիրը:

Ժամանակ անց՝ հանդապ նաև գնդի հրամանատարի բնակարանի ճրագլու ձամբարը խաղաղ եր, Ցերեկվա յերթից հոգնած՝ ամենքը հակալի քուն ելին մտել. քննած չելին միայն ժամապահներն ու հերթափահները լսելի յեր, թե ինչպես ժամապահը ծանր շրջագայում եր հրացանների բուրգի մոտ և խավարի միջով շուրջն եր նայում, ասես մթի մեջ բուն վորս և փնտում:

Հետեյալ որվա ժամը 5-ից ամբողջ ձամբարը վոտքի յեր, Վորոշված եր ամբողջ որը մնալ Շահբուզում, նախ՝ մեր շարժումը չմատնելու նպատակով՝ շարժվելը մութն ընկնելուց սկսելու համար, և յերկրորդ՝ մինչ այդ գնալու ճանապարհը կարգի բերելու համար:

Հարթումի այսպես եր կազմակերպված, ժամը 20-ին պետք ե գուրս գար առաջավոր ջոկատը՝ կաղմած շրջ գումարտակից, սակավորների մեկ դասակից և հեծլալ հետախուզների յերկու ջոկից, Առաջավոր ջոկատից առաջ եր ուղարկվելու ռազմերթի պահպանություն՝ կազմված մեկ վաշտից և հաստոցավոր գնդացիրների մեկ դասակից, վորը պիտի վարագուբեր թե աշխատանքները և թե զումարտակի զիսավոր ուժերը; Խաղմերթի պահպանության լիտեկից պետք և գնալին սակավորները և յուրաքանչյուր զորամասից նշանակված լրացուցիչ բանվորները սակավավոր հրամանդչի հետ, վորը զեկավարելու յեր աշխատանքները; Առաջավոր ջոկատից, այսինքն 2-րդ գումարտակից հետո ժամը 22-ին պետք ե գուրս գալին գնդի զիսավոր ուժերը:

### ՍԱԼՎԱՐԹՅԱ ԱՄԻՒ ԱՌՈՒԽՄԸ

Առաջավոր ջոկատը հունիսի 26-ի ժամը 20-ին խորին լուռության մեջ, լուսնի լուսով սկսեց շարժվել. մենք բավականաչափ հեռացել ելինք բացովթյագից, իսկ մեր լսելը ըլլի վրա դեռ յերեւմ ելին հրամկագմի կանանց սպիտակ ուրվագծերը. նրանք մեզ ռազմաճակատ ճամպելով՝ մեր ապագա վիճակով ելին մտանգված:

Առաջ ուղարկած բանվորներն արդեն կարգի ելին բերել ճանապարհի մի մասը, վորով մեր շարժումը դուրս բացել եր:

Չնայած ջոկատի մարդաշատությանը՝ շարժումը խորին լուռության մեջ եր կատարվում. միայն գնդացը ընդուների վուների գոփյունը և փամփուշտի յերկանիվ սալվակների անիմսերի գխդխկոցն եր յերբեմն

արձագանդում Զանգեզուրի նախալիոների ձորերում։  
Շահըուղից մինչև Կարմալինովկա ճանապարհն ընկած  
և Շահըուղի լայն հովիտը լեզերող հեղեղատներով։  
Այդ ամբողջ տարածությունը ծածկված եր առանձին  
տնտառապատ լեռներով և կտրտված բազմաթիվ առ-  
վակներով, վորոնք թափվում են Նախիջևան գետի մեջ։  
Դրանց ափերին անընդհատ պատահում եյին անտա-  
ռակներ, վորոնք առաջներս բավական տարածություն  
մեր տեսությունից ծածկում եյին։ Այդ հանգամանքը  
պահանջում եր շատ ուշադիր և զգուշ շարժվել և ու-  
ժեղ մարտական պահպանություն առաջ ուղարկել։

Նախազուշական բոլոր միջոցները ձեռք առնե-  
լով՝ առաջ եյինք գնում։ Շուտով ջոկատը լերկարելով  
բավական մեծ տարածություն բռնեց, ճանապարհը  
թույլ եր տալիս միայն շարք-շարք գնար իսկ վորոշ  
տեղերից ցից-ցից քարերը, փոսորակներն ու զափիւր-  
ները հարկադրում եյին իծաշարուկ գնար Տեղ-տեղ  
հարկադրում եյինք կանգ առնել, քարերի արանքից  
հանել յետ մնացած յերկանիվները. մանսվանդ շատ  
չարչարվեցինք Նախիջևան գետն անցնելիս։ Առաջին  
գնացքից հետո ջոկատն սկսեց բարձրանալ Նախիջևան  
գետի կողքի ամենաբարձր անդունդն ի վեր, ամպերին  
հավասար, վորոնք ծածկեցին գետը մեր տեսությունից։

Չորիները բավական ազատ եյին շարժվում. լեր-  
կանիվների համար եր շատ գժվար. դրանք բոլոր լե-  
լերին ու վոլորաններին հետևակի ոգնության կարիք  
եյին զգում։ Չնայած վոր ջոկատում հրետանի չկար,  
մեր ընթացքը դանդաղեցնում եյին շարունակ յետ  
մնացող յերկանիվները. դրանցից մեկն ել Նախիջևան  
գետում լույսեց, և մենք մեծ գժվարությամբ զուրս հա-  
նցինք։

Ալդպիսի գժվարություններ կը ելով՝ ջոկատն ար-  
դեն լուսադեմին կարմալինովկա վյուղին եր մոտենում։  
Գյուղին մոտենալով եյլնք, վոր հրացանի հատուհատ  
ձայներ լսվեցին, վորոնց ձորն եր արձագանգում։ դա  
նշան եր, վոր մեր ուազմերթի պահպանությունը հակա-  
ռակորդին և հանդիպել։ Պարզ եր, վոր ընդհարվել եյին,  
և մենք արագացրինք քայլերս։ Կես ժամ չանցած՝ դե-  
պի մեղ վազով գալիս եր մի հեծյալ։ Նա մոտեցավ  
ինձ, արագ իջավ ձիուց և ինձ պարզեց մի ծբար։

— Ի՞նչ ե, արգեն ընդհարվել եք հակառակորդի  
հետ, — հարցըրի յետ սուրհանդակին և արագ բացի  
ծրարը։

— Այս, ընկեր կոմբատ, նրանք մի քիչ կրակե-  
ցին մեզ վրա, — համարձակ ու աչքերը փայլեցնելով  
պատասխանեց կարմիր-բանակայինը։

Զեկուցը կարդալը և ընդհարման մասին տեղե-  
կանալը մեզ ամենակին չշփոթեց, և մենք շարունակե-  
ցինք շարժվել։

Հասնելով կարմալինովկային՝ գյուղի հուսիս-  
կողմը փոքր դադարք սարքեցինք։

Կարմալինովկան մի փոքրեկ գյուղ եր. յերեսում  
եր, վոր մի ժամանակ այդ լընանի կուտուրական ո-  
ջախն և յեղել։ Իր զարգացած գյուղատնտեսությունով  
ու աղնվացել տավարով համարվել և լավ գյուղերից  
մեկը։ Իսկ աչժմ աչդ ծաղկած գյուղից միայն ավերակ-  
ներ են մնացել. Դաշնակներն ավերելով գյուղը, թա-  
լանելով ստացվածքը, դրանով չեյին բավականացել և  
հետը մեկտեղ այրել ու ավերել եյին բոլոր տները։

Մեզ հետ գյուղ յեկած մալականները տեսնելով  
իրենց ավերված տնտեսությունը, յերեխայի նման

արտասվում ելին և կամավոր յեկան մեղ հետ գաշ-  
նախներից նրանց բարբարոսության վրեժն տանելու  
վարովիետե մենք տեղանքին ծանոթ չեյինք, նրանք  
մեղ համար ամենալավ ուղեցույցներ լեզան:

Տաս բռպի անց շարունակեցինք ճամպան զեպի  
Սալվարթա, լուսանում եր արդեն, և լեռան լանջին  
մուծնալիս լսելի յեղան հրացանի ու գնդացրի արձա-  
կուններ, կարելի յեր վորոշել վոր ուազմերթի պահ-  
պանությունը ընդհարվել ե հակառակորդի խոշոր զո-  
րամասների հետ: Սակայն մենք կանք չառանք:

Մոտ քսան բռպի անց ստանում եմ ուազմերթի  
պահպանության պետի զեկույցը, վորով նա հայտնում  
եր, թե հակառակորդը՝ մինչև մեկ վաշտ և յերկու հաս-  
տոցալոր գնդացրի ուժ ունենալով՝ բռնել ե Սալվար-  
թան և թույլ չի տալիս առաջ շարժվել: Ամբողջ պա-  
րագան արդեն պարզ եր այդ զեկույցից:

Ստանալով այդ զեկույցը՝ յետ վճռեցի ուազմեր-  
թի որանպանությանը ելի մի վաշտ ոգնության ու-  
ղարկել և 4-րդ վաշտի հրամանատարին հետեւալը հրա-  
մայեցի:

«Հակառակորդները մինչև մեկ վաշտ և յեր-  
կու հաստոցավոր գնդացրի ուժ ունենալով՝ բռնել  
ե Սալվարթա սարը և խափանել ուազմերթի պահ-  
պանության ճանապարհը»

Ձեզ հրամայում եմ՝ ձեզ արված գնդացրային  
մեկ դասակի հետ հարձակման անցնել, յետ շպըր-  
տել հակառակորդին նրա բռնած դիրքից և արե-  
վելյան ուղղությամբ յետ մղելով՝ գրավել Սալ-  
վարթա սարը և ամբանալ այնտեղ:

Այս կարգադրությունն անելով՝ յետ գումարու-

կի մնացած մասելով 15 բռպի կանգ առա, վորպեսպի  
4-րդ վաշտին հնարավորություն տամ առաջ անցնել:

4-րդ վաշտը քայլը արագացնելով ծածկվեց վո-  
լորանի յետեւը:

Ամառվա ամենալավ ժամանակն եր. առավոտվա  
աղջամուղն եր, և գորչ մառախուղի միջից մեր առաջ  
տեսնում ելինք հսկա Սալվարթա սարը, վորը Փոքր  
Մասիսից մի քիչ փոքր ե:

Սարն ամբողջ պատած եր թավշանման հարթ  
կանաչով: Լեռան բոլոր լանջերին տեսանելի ելին յերփ-  
ներանգ ծաղիկների գորգերը: Խոտը մարգու գոտկա-  
տելին եր հասնում, վորը սարի զառիթափության հետ  
մեկտեղ՝ դժվարացնում եր 4-րդ վաշտի շարժումը. զրա-  
փոխարդին սքանչելի քողարկում եր մեղ ընդհուպ հա-  
կառակորդին մոտենալու համար:

Սարի զառիթափությունը դանդաղեցնում եր վաշ-  
տի շարժումը. «Վեկերսի» գնդացրներ կրող ջորիները  
դժվարությամբ ելին սարը բարձրանում: Հեշտ չեր  
նաև կարմիր-բանակալինների բանը, վորոնք շալակին  
ունեցին ուազմերթի հանգերձանքը և հրացանները:

4-րդ վաշտի հրամանատար ընկ. Մալումանը, մի.  
մի լավ հրամանատար վոր բազմիցս մենշեկական  
գվարդիկաններին դուրս եր շպըտել ամենաանառիկ  
դիրքերից, քաջալերում եր իր կարմիր-բանակալիննե-  
րին և մի մեծ մահակ ձեռքն առած՝ գնում եր վաշտի  
առաջից և ոգտվելով տեղանքի քողարկումից, գնդա-  
ցրային դասակն ուղարկեց ուազմերթի պահպանու-  
թյան ձախ թեր. զրանով կաշկանդելով հակառակոր-  
դին իր ձախ թեր, հաստոցավոր գնդացրիներով և  
ուազմերթի պահպանությունով հարվածը հասցըեց աջ

թիով։ Մի ժամ անց նա ամբողջ սարը մաքրեց հակառակորդից և ինքը զրավելով այն, սկսեց ամրանալ

Գումարտակն ամբողջությամբ սարը բարձրանալով՝ հետեւալ կարդով տեղափոխվեց։

5-րդ և 6-րդ վաշտերը, ունենալով լերկուական ձեռքի գնդացիր, տեղավորվեցին առաջին եշելոնում, 4-րդ վաշտը և գնդացը ային խումբը՝ 2-րդ եշելոնում։ Առաջին եշելոնին հաստոցալոր գնդացիրներ չտրվեցին, նկատի ունենալով վոր 2-րդ եշելոնի հրակետերից միշտ ել կարելի է հարվածել հակառակորդին, մանավանդ վոր առաջին եշելոնի խորությունը 400 մետրից ավելի էր չեր։ Յերեկոյան դեմ հետախուզություն ուղարկեցինք հակառակորդի տեղավորումը, նրա ուժն ու հրակագմը վորոշելու համար, ինչպես և կոնտրոլ գերիներ բանելու։ Մեր հետախուզներին հաջողվեց անցնել հակառակորդի թիկունքը՝ Ալիլու գյուղը և մի գերի բանելով գումարտակ վերագանակ։

Գերու խոսքերից լերեւում եր, վոր մեր դեմ կըռվում եր մեկ վաշտ խմբապետ Աղաբեկի հրամանատարությամբ, և վոր զիշերը նժղենի կարգադրությամբ Սիսիանից ու Բոնակոթից մինչև լերկու գումարտակ իրենց գնդացիրներով ոժանդակ ուժեր են ուղարկված։

Վերջին տեղեկությանը մենք մի քիչ կասկածում եինք, չենթադրելով, թե գլուղացին չափազանցնում ե, բայց հետեւալ որը նրա տված ըոլոր տեղեկություններն արդարացան։ Հստ լերեւթին գլուղացին մեր մեջ չգտնելով այն ամենը, ինչ զաշնակներն եյին մեզ վերագրել, վճռեց ասել մեզ ամբողջ ճշմարտությունը, մեզ իր մարդիկը համարելով։

Ստացած բոլոր տեղեկությունների մասին ան-

միջապես հեռախոսագրով ղեկուցվեց զնդի հրամանութարին։

Հետեւալ որը ժամը 12-ի մոտ ղիաակետից նըկասվեց հակառակորդի շարժում Մազրայի կողմից և մարդկանց հավաքում Ալիլուի ուղոնում։ Այդ ամենից կարելի էր հետեւցնել, վոր հակառակորդը հարձակման ե պատրաստվում։ Յեվ ժամը 15-ից Մազրալի ուայոնից հակառակորդի թնդանոթներն սկսեցին սմբակոծել մեր գումարտակը։ Մենք նկատում եինք, թե ինչպես նախ ծուխ եր լերեւում, հետո խլացուցիչ պայմբյունը լսվում է արկը մեր մոտովը թուզում անցնում եր. հետո մի ճայթյուն, և մեր յերկրորդ գումարտակի յետեր թիկունքում գետնից փոշու սկսն եր բարձրանում։

Իսկ կարմիր-բանակայինները նստած են, իրենց համար, իրենց զիրքերում, կարծես չէ բան ել չի պատահել Միքանիսը կոշիկներն են կարկատում, կարգի գցում հարձակում կանխատեսելով, ուրիշներն ինչ-վոր բանի մասին զրուցում են, վոմանք ել բինոկլով անթարթ զիտում են այն տեղը, Մազրալի ուայոնում հեռու-հեռուն, վրատեղ ծուխը լերեաց։ հետո պալթած արկի ճայնը և նույն վայրկյանին մի ուրիշը մեր թիկունքում։

Այդ պահուն նրանցից մոտիկ պայմեն թշնամուարկը և նրանց փոշեծածկ արեց։

Պահ, — գոչեց կարմիր-բանակային Մեսրոպը և մի կողմ թռավ։

— Վախեցմբ, հօ կնիկ չե՞ս, — գոռաց ղեպի նամի ուրիշ կարմիր-բանակային՝ Համոն, շարունակելով հետեւալ հակառակորդի հրետանուն։ Իսկ Մեսրոպը

գետնին նստած՝ շոշափում եր իր ամբողջ մարմինը,  
ցանկանալով իմանալ, թե հո պատահմամբ վիրավոր-  
ված չե: Այդ ժամանակ յես ընդհուպ մոտենում եմ  
նրան և նկատելով նրա վախեցած դունատ դեմքը,  
հարցնում եմ:

— Մեսրոպ, ինչի՞ւ յես այդպիս գունատ:

— Իեղապատառ լեղապ՝ կնկա նման, ընկեր հը-  
րամանատար, դաշնակների եղ հիմար արկերից վախե-  
ցավ, — պատասխանեց ինձ Համոն նրա փոխարեն,  
չդադարելով հակառակորդին դիտելուց:

— Ո՞վ ե ասում վախեցա, յես միայն ցնցվեցի,  
ինչպես ամեն մեկն ելցնցվում ե արկի պայթյունից, —  
շպրտեց վիրավորված Մեսրոպը:

— Վոչոնչ, վոչինչ շարունակեցիք դիտել հակա-  
ռակորդին, — ասացի Մեսրոպին և շարունակեցի ճա-  
նապարհութեալի 5-րդ վաշտլու Յես 5-րդ վաշտի ռայո-  
նումն ելի, յերբ դաշնակները համոզվելով, թե լոգուր  
են փչացնում արկերը, դադարեցին մեղ վրա կրակելուց:

Դաշնակները 60-ից ավելի արկ արձակելով, մի  
ճանկուցով ել չմնասելով մեղ, բացի այն, վոր Մեսրո-  
պին վախեցրին, լոեցին: Մեր հրետանին նրանց գո-  
ռոցին չեր պատասխանում: Առաջ ու առաջ մեր ցանկու-  
թյունն եր ծածկել գաշնակներից մեր հրետանու գոյու-  
թյունը, վորպեսզի հետո հրետանու հանկարծական կրա-  
կով հակառակորդին գետին տապալելինք: Յես արդեն  
6-րդ վաշտի ռայոնն ելի անցել յերբ ինձ հեռախոսի մոտ  
կանչեցին: Ինչինչ կարգավորություններ եմ անում  
վաշտի հրամանատար ընկ. Ռդաբաշյանին, ինքս շտապ  
գնում եմ 2-րդ եշելոնը: Գնդի հրամանատարը դեռ սպա-  
սում եր ինձ հեռախոսի մոտ:

— Ապարաբատի մոտ եմ, — ասում եմ ին:

— Հը՛, ուազմածակատում դրությունը վհնց ե.  
հրետանու ոմբակոծությունից հո վիրավորվածներ  
չկմն, — նլարդու հարցնում ե գնդի հրամանատար  
Տրավկինը:

— Վոչ, ամեն ինչ բարեհաջող ե, — ասում եմ:

— Գրաված դիրքերում կացեք մինչև վաշը. վա-  
զը կուղարկեմ ձեզ փոխարինելու, — հրամայեց գնդի  
հրամանատարը և հեռացավ հեռախոսից:

Արդեն մթնել սկսեց, յերբ յես վերջացրի խոնա-  
կցությունս գնդի հրամանատարի հետ և 5-րդ ու 6-րդ  
վաշտերի կապակինին կանչեցի, վորպեսզի վաշտերի  
հրամանատարներին լրացուցիչ կարգադրություններ  
անեմ. հանկարծ առջևում հրաձգություն լսվեց, իսկ  
հետո՝ «ռւռա» աղաղակներ:

Գումարտակի առաջին եշելոնը չեր սպասում այդ  
հարձակմանը և սկսեց նահանջել. Վաղորոք տեղավո-  
րած դնդացրային խումբն սկսեց գնդակոծել հարձակ-  
վող հակառակորդին և ոգնել առաջին եշելոնի նա-  
հանջին: Բայց թշնամին ամբողջ ժամանակ սեղմում  
եր անկարգ նահանջող վաշտերը: Նորից լսվեցին՝ «Ռւ-  
ռա, ռւռա, ռւռա», և նորից աղաղակներ՝ «Խիիր գա-  
վաճաներին, վոչվոքի չխնայել»:

Խուճապը տարածվեց ամբողջ գումարտակում,  
այնպիս, վոր 4-րդ վաշտն ել ազդելից, այնինչ մինչ  
այդ եր կայունությամբ աչքի յեր ընկնում:

Մի ակնթարթ եր այդ: Ելի մի փոքր տատանում,  
և դաշնակները մեղ վար կքշելին Սալվորթա սարից:

— 4-րդ վաշտ, պատրաստվիր հակահարձակման,  
գոռում եմ յես:

— Վաշտը պատրաստ ե, — զեկուցում ե ընկ. Մալումյանը:

Մեզանից յուրաքանչյուրը հիշեց ընկ. Մյասնիկանի խոսքերը և ամեն վոք պատրաստ եր իր արյունը թափել Զանգեզուրի գյուղացու աղատության համար:

— Ընկերներ, առաջ դեպի թշնամին, մինչեւ հաղթանակ, — գուսացի յես: Խոսքս դեռ չավարտած՝ ընկ. Մալումյանն առաջ թուավի Դաշնակներն արդեն մեզ եյին հասել: Արյունը զլուխս խփեց. մառզերս առա և Մալումյանի յետելց, վաշտի առաջն անցած՝ խոլանում եմ գաշնակների վրա:

— Ուռա, ուռա, ուռա:

— Ուռա, ուռա, ուռա:

Բազմաթիվ վոտների խուլ զոփյունու Ընդհատվող շնչառությունն Զենքի զբնոց ու չխկոց: Կոփամարտ ե, ձեռնամարտ: Դաշնակները սասանեցին և սվինը հակահարձակմանը չգիմանալով՝ ահեղ արծվի հարձակման յենթարկված հավի ճուտերի պես ցըիկ անցան:

Դաշնակները ցըիկ անցան, և մենք նորից հին դիրքերումն ենք:

Առաջին եշելոնի վաշտերը կարգի բերվեցին: Հրամայում եմ 4-րդ վաշտը յետ տանել յերկրորդ եշելոնը, 5-րդն ու 6-րդը իրենց զերքերը առաջ տանել և հավաքել սպանվածներին ու վիրավորվածներին: Անհամբեր տեղեկությունների յեմ սպասում վաշտերի հրամանատարներից:

Մի ժամ անցած՝ նրանք զեկուցում են.

— Վոչ մի սպանված. յերեք թեթև վիրավոր

4-րդ վաշտից. լոթ սպանված վաշնակ. — այլպիսի տեղեկություններ ստանալով՝ հանգստացա, կրծքիցս քարն ընկավ: Մի մտածի՛ մարդ, սվինամարտի նետվել և միայն յերեք թեթև վիրավոր տալ:

— Լավ, հավաքեցեք գաշնակների դիակները և մի տեղ դբեք մինչեւ վաղը:

Վաշտերի հրամանատարները գնացին այդ հրամանը կատարելու, իսկ յես գնացի զնդի հրամանատարին զեկուցելու մարտի մեր հաջող վախճանի մասին:

Ընկ. Տըավկինը ցնծությանը ընդունեց այդ լուրը և այդ մարտի միքանի մասնակիցներին վակորոք շնորհավորեց Կարմիր գրոշի շքանշան ստանալը և նախազգուշացրեց, վոր զգաստ լինենք, լինթադրելով, վոր գաշնակները կարող են նորից փորձ անել Սալվարթան զրավելու:

Սակայն իզուր. գնդի հրամանատարի անհանգըստությունը ավելորդ եր: Գիշերը մեր ուղարկած հետախուզությունը դաշնակների խրամատներում մարդ չգտավ, բացի վաշտային պահակը, վորը հենց առաջին հրաձգությունից փախուստի զիմեց:

Լուսացավ: Յուրաքանչյուր կարմիր-բանակային հետաքրքրում եր տեսնելու դաշնակ զինվորներին: Եես ևս մոտեցա նայելու դժբախտներին, վորոնց բախտն ալսեն եր բերել: Սպանվածներից մեկի զըը պանից հետևյալ բովանդակության մի թերթիկ գուրս յեկավ.

«Միսիանի մարտական ճակատամասի պետ խմբապետ Հարությունին,

Հակառակորդին Սալվարթա սարից քշելը կարեռագույն խնդիր ե թե պաշտպանության և թե հետագա հարձակումը զարգացնելու համար:

Զեղ ոգնության ուղարկելով սիսիանցիներից ու բռնակոթցիներից ամենալավ զինվորներին՝ հրամայում եմ.

Այսոր յերեկոյան դեմ քշել հակառակորդին Սալվարթա սարից և ամրացնել այն:

Նկատի ունեցեք, վոր ներկա խնդրի կատարումը հատուկ ծառակություն ե հայ ժողովը դիմացի առաջ:

### Սպարապետ Նժղեհ»:

Իներթիկը ձեռքե-ձեռք եր անցնում, և կարմիր-բանակիցները բարձրածայն կարգալով՝ ասում ենքն.

— Այ քեզ Հարություն. խմբապետ եր, այժմ ծառակություն մատուցեց հայ ժողովը դիմացի և միանդամից դիներակի աստիճան ստացավ:

Հոգնած կարմիր-բանակայիններն այսպես զրուցելով՝ պատրաստվում եյին հողին հանձնելու գաշնակ դժբախտ զինվորներին:

### ՍիՍԻԱՆԻ ԱՌՈՒՄԸ

Հետեւյալ որը, հունիսի 28-ը համեմատաբար հանգիստ անցավ. յերբեմն միայն կամ մեր կամ հակառակորդի այս ու այն դիրքից հատ-հատ կը ակում ելին, դրանով իրենց գոյության մասին հայտնելով:

Յերկորդ գումարտակն ուժասպառ եր լեղել թե ռազմերթով և թե յերկու որ տևող անընդհատ կոփեներից. Կարմիր-բանակայինները յերկու որ տաք կե-

բակուր չեյին ստացել, վորովհետև այդ սարի զառիթափի ժամաների վրա վոչ մի ռազմերթի խոհանոց բարձրացնել չեր կարելի, իսկ ավելի և կարմիր-բանակալիններն իրենց կաթսալիկներով չեյին կարսող կերակուր բերել. Բացի այն, վոր կարմիր-բանակալինները տաք կերակուր չեյին ստանում, դրա հետ մեկտեղ ջրից ել եյին զրկված, ծարավը ձլունով ելին հագեցնում, վորի հետևանքով շատերը հիվանդացան:

Նույն որվա յերեկոյան, ժամը 18-ին մեղ փոխարինելու յեկավ 189-ըդ հրածիդ գնդի գումարտակը:

Հակառակորդը մեր հերթափոխվելլ տեսնելով վրաներս գնդացրալին ուժեղ կրակ բացեց, ըստ յերեվութին մեր հարձակումից յերկյուղ կրելով: Մեր հեռանալովը գնդացրալին կրակը դադարեց, և ամբողջ ռազմաճակատը հանդարտվեց: Գումարտակը գալուլ գընդի շտաբը՝ մտավ 2-ըդ եշելոնի մեջ: Մենք ալի եշելոնում գտնվելով՝ կարողացանք մի ամբողջ որ հանդըստանալ վորը մեզ բավկան եր, վորպեսզի նորից մարտի մտնելինք հակառակորդի հետ:

Հուլիսի 1-ի յերեկոյան դեմ մեր գուման ամբողջ խմբվեց Սալվարթակի գագաթին, նպատակ ունենալով շարունակել հարձակումը, իսկ 189-ըդ գումանը կհնարոնցավ մեր ձախ թեկում, վորպեսզի զարգացնե մեր գնդի հաջողությունը:

Լեռնային թնդանոթները նույնպես, ջորիների մեջքով, սարը բարձրացգեցին: Մութն ընկնելուն պես սկսվեց հրանոթների դիրքերի նախապատրաստումը:

Լուսաղեմին մեր գնդի 3-ըդ գումարտակն իբրև կաշկանդող խումբ առաջ ուղարկվեց:

Առաջին գումարտակը հարվածող խմբի մեջ մտավ,

իսկ 2-րդը շաբունակում եր մնալ գնդի 2-րդ եշելոնում:  
Մինչև հարձակման ժամը հասնելը բոլոր զորա-  
մասերն արդեն կազմ-պատրաստ եյին: Գնդի հրամա-  
նատարը հավաստիանալով այդ բանին, Յ-րդ գումար-  
տակին հրամայեց սկսել հարձակումը: Յ-րդ գումար-  
տակի հարձակման անցնելու հետ առաջին գումարտակի  
2-րդ վաշտը, վոր աննկատ մոտեցել եր հակառակորդի  
դիրքերին, նետի պես գրոհեց և հակառակորդին հիմ-  
նական դիրքերից համելով՝ ստիպեց նահանջել: Առա-  
ջին գումարտակին ամբողջ կազմով սկսեց՝ հնտամտել  
հակառակորդին, սակայն նրան կանգնեցրեց հակառա-  
կորդի 2-րդ եշելոնը, վորը հասել եր իր 1-ին եշելոնին  
ոգնության:

Մեր լերկորդ գումարտակը դեռ գնդի 2-րդ եշե-  
լոնում եր Առջեներս վաղուց արդեն գոռզոռում ելին  
թնդանոթները, լսիում եր հրացանա-գնդացրալին տըկ-  
տըկոցը:

Գումարտակը յերեկվա «բարեկամների» հետ, շու-  
տափուշթմարտի բռնվելու յեր ծարավի, սակայն գնդի  
հրասանատարից մեր մասի դեռ պատվեր չեր ստացվում.  
ըստ լերեկութին նա ուղում եր առանց մեր գումարտակի  
հաշիվ տեսնել հակառակորդի հետ, այնինչ առջեռում  
կովող զորամասերի գործը այնքան ել լավ չեր, նա  
միքանի անգամ գրոհի անցավ, բայց հակառակորդի  
հետեւ կազորը ամուր եր մնում և չեր զիջում կա-  
զուչի-դադ սարը, վորը մարտի քմահաճույքով դիմա-  
զրության կենարոն եր դարձել: Մեր թնդանոթներն  
ավելի ու ավելի մոտիկից ելին հարցածում կազուչի-  
դադի վրա գտնվող հակառակորդի հետևազորին, աստի-  
ճանաբար (վտավաճներով) մոտենալով նրանց, Վեր-

ջապես լես նկատեցի գեպի ինձ սուրացող պատվիրա-  
կին: Պարզ եր ինձ համար, վոր հասել եր մեր գումար-  
տակի մարտի մեջ մտնելու մոմինալը: Մոտենալով ինձ՝  
պատվիրակը ձիուց թռավ ցած և ինձ հանձնեց հետե-  
վալ բովանդակության մի ծրաբ.

«2-րդ գումարտակի հրամանատարին.

Սալվարթա սարի հյուսիս-արևելյան կատար

2/VII 21 թ.

Քարտեզ 5 վերստ 1 մաս.

1. Հակառակորդը, վոր բռնած ունի կազու-  
չի-դադ սարը, ոգնություն և ստացել և ամուր  
մնում ե իր դիրքերում, առաջին եշելոնի հաճա-  
խակի գրոհներն անհաջող վերջացան:

2. Հրամակում եմ ձեղ հարձակման անցնել  
Ալիլուի ուղղությամբ, դուրս գալ հակառակորդի  
թերի դեմ և զրանով ոժանգակել առաջին գու-  
մարտակի հրամանատարին Կաղուչի-դադ սարը  
գրավելու։

Այդ պատվերն ստանալով՝ գումարտակը ըստ վաշ-  
տերի բաժանվեց, զառիթափ լիլերը, քարքարոս, խիտ  
թփուտով ծածկված բլուրներն իլենց փշուր քարեցով՝  
գժվարացնում ելին գումարտակի շարժումը:

Հետախուզելով տեղանքը՝ վերոշեցի շարժվել Ալի-  
լուի արենելյան կողմանը, ունենալով Յ-րդ ու Յ-րդ  
վաշտերը և գնդացրախմբի մի դասակ առաջից, իսկ  
4-րդ վաշտը լիլեկու դասակով և գնդացրախմբով ան-  
դղածե տեղափոքել Յ-րդ վաշտից աջ, 2-րդ եշելոնում:

Շարժումը բլուրների վրա գժվար եր, սակայն

կարմիր-բանակայինները, վորոնց հրամանատարները  
քաջալերում ելին, արագացրին քալլը: Այդ ժամանակ  
գիտակետից հաղորդեցին, վոր Ալիլու գլուղի յիտեղ  
նկատելի իւ մեծաքանակ հեծելազորի ու հետեազորի  
շարժում: Բոլոր հրամանատարներն սկսեցին բինոկլ-  
ներով փնտռել հակառակորդին: Փոշու մի մեծ սյուն  
ապացուց եր, վոր մեկը կա, բաց թանձը մառախուղը  
թուզ չեր տալիս փորոշել, թե այդ ինչից եւ Յենթա-  
դրելով թե հակառակորդին ոժանդակ մեծ ուժեր են  
մոտենում, 2-րդ գործարտակն ավելի արագ շարժվեց,  
վորպիսպի գրավի Ալիլուի վրա իշխող բարձունքները  
և հակառակորդին հնարավորություն չտա գյուղից  
դուրս գալու:

Ինչքան մենք բարձունքներին եյինք մոտենում,  
այնքան մեղանից հեռանում եյին հակառակորդին յե-  
րևակայաբար յեկած ոգնական ուժերը:

Այդ ժամանակ մենք վճռեցինք, թե հակառակորդը  
նահանջում ե, և ավելի վճռական անցանք հարձակման:

Առաջներս լուրջ խոչընդոտի չհանդիպելով՝ գու-  
մարտուկը գրավեց Ալիլուի հարավ-արևմտակողմի ան-  
անուն բարձունքները, շարժվեց դեպի գլուղ և մտավ  
հարավ-արևելյան ծայրից:

Թրավելով Ալիլուն՝ մենք այնտեղ գրեթե բնակիչ  
չտեսանք, բացի միքանի ծերունիներից, վորոնց կյան-  
քը, իրենց ասելով, այնքան ել արժեք չուներ իրենց  
համար: Հարցուփորձից իմացանք, վոր բնակիչները՝  
վախենալով, թե բայլշեկիների «կացնավորների»  
խումբն իրենց կկոտորի, ով ինչ կարող եր վերցրել  
եր ու Բոնակոթ փախել: Այդ խոսակցություններից  
հետո մեզ համար պարզ յեղավ, վոր Ալիլուի հեռացող

բնակիչներին մենք հակառակորդի սժանդակ ուժերի  
տեղ ելինք դրել: Պետք եր հակառակորդից վրեժ առ-  
նել «կացնավորների» խմբի մասին նրա տարածած  
պրովոկացիալի համար, ուստի մենք վճռեցինք նրանց  
խիստ պատժել: Առանձնացրած 5-րդ վաշտն իրեն կըց-  
գած գնդացրային դասակի հետ հրաման ստացավ հե-  
տամոտել հակառակորդին և փախստականներին համա-  
լով՝ նրանց իրենց գյուղը վերադարձնել տուանց կար-  
ցընելու իր շփումը հակառակորդի հետ, իսկ մնացած  
լերկու վաշտն ու գնդացրային յերկու դասակը ողետք  
և հարձակման անցնելին կազուչի-դադ սարի վրա ամ-  
բացած հակառակորդի վրա: 6-րդ վաշտի հրամանա-  
տար ընկ. Ոդաբաշյանն իր վաշտով մոտեցավ հակա-  
ռակորդին մինչև հրացանի հեռակայություն և թաքըս-  
տոցից դուրս պրծնելով՝ գրոհի դիմեց:

Բոլորը միանգամից գոչեցին, հետո իսկուն լոե-  
ցին: Առաջին գումարտակը փորձեց հարձակման անց-  
նել, սակայն հակառակորդի հաստոցավոր գնդացիր՝  
ների դիպուկ կրակը մոտ չեր թողնում: Դաշնակների  
հրանոթները գուգուացին և մեզ շրապնելով գնդակո-  
ծեցին: Այդ ժամանակ մեր մարտկոցը՝ չգիտես ինչու՝  
լոել եր:

Ես մոտեցրի 4-րդ վաշտը և 6-րդի հրամանատար  
ընկ. Ոդաբաշյանին պատվիրեցի վճռական հարձակման  
անցնել: 6-րդ վաշտը լելավ և առաջ անցավ: Հակա-  
ռակորդի գնդացիրն սկսեց գնդակ տեղալ վրան: Թը-  
վում եր, թե դիպուկ կրակը մարդկանց շարքերում ա-  
վերածություն ե անում: Կարմիր-բանակացինները կը-  
րակի տակ վազում ելին, պատկում, նորից վազում,  
սողդակի դեպի հակառակորդը դիմելով: Միքանիսը  
փորսող մտնում ելին վորեն ծածկաբանի յետեւ

Հրածգությունը հաճախացած շարունակվում եր, սակայն վաշտն առաջ եր շարժվում:

Հանկարծ մեր ձախ թիեն բոլորովին մոտիկ, առաջին գումարտակի յետեր մեր մարտկոցները զոռգուացին: Արկերն ընկնում եյին դաշնակների գծի հենց առաջը և քանդելով հողը, գետին կպած դաշնակ զինվորներին քար ու հողով ծածկում ելին և միսակոլու անում:

— Մարտկոցն ոգնում մեղ, առաջ,—զոռաց վաշտի հրամանատար Մալումյանը և առաջ անցավ:

Մարտկոցի կրակ բանալուց ուրախացած մարդիկ առաջ վազեցին և մի ակնթարթում հակառակորդի թիկունքն անցան:

Դաշնակները մեղ իրենց թիկունքում նկատելով՝ սկսեցին կազուչի-դաղից իշնել նահանջելով Մալրայի ուղղությամբ, զրանից հետո Յ-բդ գումարտակն սկսեց նրանց հետամտել, իսկ մեղ պատվիրված եր հարձակվել Տուլորս - Բոնակոթ ուղղությամբ:

Պատվիրելով գնդացիրները ջորիներին բարձել, մենք սկսեցինք իշնել Սիսիան գյուղը, Գյուղը զրավելուց հետո մեղ հայտնեցին, վոր դաշնակ մինիստը Մելիք-Ցոլչյանը իր խմբով բռնել և Բլուս-Արաթոնի սարը և Կալագան-դաղը, ցանկանալով խանգարել մեր շարժման ուղին:

Գնդի հրամանատարը այդ տեղեկություններն ստանալուց հետո նոր վճիռ կախցրեց:

Առաջին գումարտակին հրամալվեց հարձակվել Ալխաթյանի ուղղությամբ, իսկ յերկրորդին՝ Տուլորս և Աղքենդի:

Մենք շարժվեցինք գնդի հրամանատարի պատ-

փերը կատարելու: Եեվ հազիվ լելել ելինք Սիսիանի հրուսակողմի անանուն բարձունքները, վոր կալագան-դաղ սարի լանջին մի խումբ հեծլալներ տեսանք, վորոնք լետ ու առաջ ելին արշավում, ըստ յերեսութին ցանկանում եյին դրանով մեղ վախեցնել:

— Գնդացիրները բեռներից իջեցնել, — հրամայեցի յետ:

Մամիջապես գնդացիրները վար առնվեցին և դրվեցին: Մենք դեռ շատ հեռվումն ելինք, լերը դաշնակներն սկսեցին համարակերով կրակել մեղ վրա: Այդ նշան եր այն բանի, վոր հակառակորդը լուրջ գիմադրություն չի ցույց տալու: Քանի վոր հակառակորդը հրացանների համազարկերով եր կրակում, մենք յենթազրեցինք, վոր նա ծանր գնդացիրներ, նույնիսկ ձեռքի գնդացիրներ չունի: Մեր յենթազրությունն արդարացավ: Մենք մեր հաստոցավոր գնդացիրների կրակով պատսպարված՝ սկսեցինք մոտենալ հակառակորդին, Դաշնակները նկատեցին այդ, չգիմացան և առանց վորևէ գիմազրության նստեցին ձիերը և արշավեցին Աղքենդի ուղղությամբ և այն կողմը:

Յերեկոյան դեմ մենք զրավեցինք Աղքենդը, և գումարտակը սեղավորվեց գիշերելու:

Վաշտերի հրամանատարներն սկսեցին իրենց մարդկանցը տեղավորել իսկ յես քաղղկեների հետ գնացի գլուղական ժողով՝ հեղկոմ կազմակերպելու:

Ուշ յերեկոյան հեղկոմ կազմակերպելով մենք լելանք և գիմազինք դեպի մեղ հատկացված շինքը: Եետկցու ինձ հասալ հեղկոմի նախագահը և հարցըց,

— Ընկեր հրամանատար, յես կարգադրել եմ, վոր գյուղում յեղած զենքը հավաքեն. վերտեղ դարսենք:

— Հեղկոմի զբանենրակը, — պատասխանեցի և  
շարունակեցի:

Մինչև գիշերվա ժամը 12-ը գլուղացիները դրեթե-  
ամբողջ զինքը հանձնեցին: Մենք առաջներս Մեջիլու  
զուղի ուղղությամբ մարտական պահպանություն ունե-  
նալով՝ խորը քննեցինք, չկանխատեսելով, թե վորեա  
բնդիարում կունենանք:

Կատաղի մարտից և ցերեկվա լերթից հոգնած  
յես մեռելի պես եյի քնել և քնի միջից լսեցի, թե  
ինչպես մերն իմ անունն է տալիս.

— Էնկեր կոմբատ, ընկեր կոմբատ:

— Ի՞նչ կա, — հարցրի յես շինելը վրայիցո զցե-  
լով և բարձրացա տեղից:

— Ավտ յես եմ, ընկեր հրամանատար, գումար-  
տակի հեթապահը, հենց այժմ պարեկները բերին այ  
այս մարդուն. — և ցույց տվեց բարձրահասակ, ցնցո-  
տիներով մի մարդու:

— Ի՞նչ մարդ ե, ուր եր գնում. — հարցրի հեր-  
թապահին:

— Թույլ տվեք զեկուցել. — դիմեց ինձ մինչև այդ  
լուր կացած ցնցոտիավոր մարդը:

— Ասացեք, ի՞նչ քաղաքացի յեք:

— Եես հայկական 3-րդ գնդի կարմիր-բանակա-  
ցին եմ, մենք Դարալազիազում 70 մարդով դերի ըն-  
կանք, և 70 մարդուց, ինչպես տեսնում եք, յես եմ ազատ-  
վել, այն ել անձնու, իսկ մնացածներին դաշնակները  
գնդակահարեցին:

Յեզ նա մանրամասն պատմեց Տաթեսի ժայռի  
գնդակահարության մանրամասնությունները:

Նայեցի նրան, և հավատալս չեր գալիս, թե նա  
կարմիր-բանակային ե, թե նա մերն ե.

Իսկ ինչնու կապացուցիք, թե 3-րդ գնդի կար-  
միր-բանակային եք, ինչպիս ասում եք, — դիմելով  
նրան, հարցը լիս:

Նա իջեցրեց շալվարը և միջից հանեց կարովի  
կուսառմած և մեկնեց ինձ:

Այդ փաստն ելինձ համար համոզեցուցիչ չեր, և յես  
այնուամենալիվ նրան զաշնակ լրտես ելի կարծում:

— Այս մում տոմսն ե, — հարցնում եմ:

— Այս իմ ընկեր կարո Ասլամանի տոմսն ե,  
վորին գաշնակները ուրիշների հետ մեկտեղ սպանե-  
ցին, — պատասխանեց նա:

— Ձեր գնդի հրամանատարն ով եր, — հարցա-  
գնում եմ յես:

— Մեր գնդի հրամանատարը ընկ. Բաղդասա-  
րովն եր, իսկ գնդի ուղմիումը ընկ. Աթոյանն եր,  
բնավ Հավատում նրան ու հարցնում եմ,

— Ի՞նչ զրահագնացքներ կալին ձեզ հետ և  
վիրտեղ:

— Մեզ հետ «Ազատամարտ» և «Մուսակելյան»  
զրահագնացքներն ելին՝ Դամարլվում, — պատասխանում  
ե նա:

— Լավ, տարեք ընկերոջը, մի տեղ տեղափորեք,  
կերակրեք և կապիցեք վերքը, — ասացի հեթապահին,  
Նրանք գնացին, իսկ յես նորից պառկեցի:

ԳՆԴԱՊԵՏԸ ՄՏԱԾՈՒՄ Ե ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ ԱՌԱՋԱԾ  
ԴՐՈՒՅՑՈՒԽՆԵԼ

